ՀՈԴՎԱԾՆԵՐ
ՍՄԿԿ XXVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՄԿԿ XXVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՄԿԿ XXVII համագումարի պատմական փաստաթղթերում նշտնակալից ուշադրություն դարձվեց սովետական հասարակարգի քաղաքական սիստեմի զարգացման, պետական ապարատի աշխատանքի բարելավման, դեմոկրատիայի հետագա կատարելագործման, ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարման ավելի լրիվ իրականացման, պետական և հասարակական կյանքի կառավարման մեջ աշխատավորական կոլեկտիվների ակտիվացման հարցերի վրա՝ կապված կոմունիստական հասարակարգի կառուցման ծրագրի իրականացման հետ։

Մարքսիզմի կլասիկները կոմունիստական հասարակարգի երեք աստիճանները՝ կապիտալիզմից սոցիալիզմի անցման շրջանը, ստորին և բարձրագույն փուլերը, միմյանցից որակական կողմերով տարբերում են։ Այսպես, կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանը, բարձրանալով կապիտալիստական հասարակարգի փլատակների վրա, չի կարողանում միանգամից ազատագրվել նրա արատներից։ Կ. Մարքսը ընդգծել է, որ այս «շրջանի պետությունն ուրիշ ոչինչ չի կարող լինել, բացի պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայից...»[1]։ Այդ դիկտատուրայի պետությունն անհրաժեշտ էր մի ամբողջ պատմական ժամանակաշրջանի համար, որպեսզի նա կարողանար ոչնչացնել տապալված, բայց դեռևս չոչնչացված դասակարգերի դիմադրությունը, ստեղծեր սոցիալիստական հասարակարգի սեփական հիմքը՝ սոցիալ-տնտեսական, կուլտուրական և այլ բնագավառներում, ինչպես նաև իրականացներ արտաքին խաղաղասիրական ֆունկցիան։ Այսպիսով, կապիտալիզմից սոցիալիզմին անցնելիս տապալված, բայց իշխանության ձգտող դասակարգի ճնշումը դեռևս անհրաժեշտ էր, այդ պատճառով էլ անհրաժեշտ էր նաև ճնշում իրականացնող ապարատ, պետություն։ «Բայց դա արդեն անցման պետություն է, դա այլևս պետություն չէ իսկական իմաստով...»[2], այսինքն, այդ պետությունն իր ներքին և արտաքին ֆունկցիաների իրականացման տեսակետից այնպիսի պետություն չէր, ինչպիսին եղել են ստրկատիրական, ֆեոդալական և բուրժուական տիպի պետությունները։

Կապիտալիզմից սոցիալիզմին և կոմունիզմին անցման դժվարությունները հաշվի առնելով Ֆ. Էնգելսը դեռևս 1891 թ. գրել է, որ դեպի կոմունիզմ անցման փուլերի պրոբլեմը «ամենադժվարին հարցն է բոլոր այն հարցերից, որոնք միայն գոյություն ունեն»[3], իսկ Վ. Ի. Լենինը կուսակցությանը հիշեցնում էր, որ ճանապարհը դեպի կոմունիզմ «երբեք ուղիղ չի լինի, այն աներևակայելի չափով բարդ կլինի...»[4]։

Մեր երկրում սոցիալիզմի կառուցման փորձը ցույց է տալիս, որ զարգացած սոցիալիզմն ունի կատարելագործման երկարատև ժամանակաշրջան, որի ընթացքում աստիճանաբար կիրականացվեն սոցիալիզմից կոմունիզմին անցման մեր նպատակները։ ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրությունում նշված է, որ «ամբողջ հասակով ծառանում է դեպի կոմունիզմ հետագա առաջընթացի նպատակով սոցիալիստական հասարակության համակողմանի կատարելագործ-

---

1 Վ. Ի. Լենին, երկ, հ. 33, էջ 110։
2 Վ. Ի. Լենին, երկ, հ. 33, էջ 115։
3 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 38, с. 108.
4 Վ. Ի. Լենին, երկ, հ. 36, էջ 59։

ման... խնդիրը»[5], որը կատարվելու է սոցիալիստական համաժողովրդական պետության միջոցով, որովհետև պետությունը «հանդես է գալիս որպես մեր երկրում սոցիալիզմի կատարելագործման գլխավոր գործիք»[6]։ Դրան համապատասխան ՍՄԿԿ XXVII համագումարը նշեց, որ «կուսակցության քաղաքականության հանգուցային հարցը սովետական սոցիալիստական պետության զարգացումն է և ամրապնդումը...»[7]։

Արդյոք օրինաչափությո՞ն է պետության ամրապնդումն այնպիսի պայմաններում, երբ հասարակության մեջ չկան թշնամի դասակարգեր, մարդու շահագործում մարդու կողմից և նրա հիմքը՝ մասնավոր սեփականությունը։ Այո, օրինաչափ է, որովհետև համաժողովրդական պետությունն անհրաժեշտ է բարեկամական դասակարգերի ստեղծագործական համատեղ աշխատանքի իրավական կարգավորման համար, այն կոչված է իրականացնելու «Յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ աշխատանքի» սկզբունքը։ «...Կոմունիզմի առաջին փուլը դեռ չի կարող արդարություն ու հավասարություն տալ»[8] աշխատանքի և նրա արդյունքի բաշխման գործում,— գրել է Վ. Ի. Լենինը, դա «թերություն» է, Կ. Մարքսի խոսքերով, բայց այն «անխուսափելի է կոմունիզմի առաջին փուլում, որովհետև առանց ուտոպիզմի մեջ ընկնելու չի կարելի կարծել, թե տապալելով կապիտալիզմը, մարդիկ միանգամից կսովորեն աշխատել հասարակության համար առանց իրավունքի որևէ նորմայի...»[9]։ Կ. Մարքսը և Վ. Ի. Լենինը գտնում էին, որ կոմունիստական հասարակարգի առաջին փուլում, շահագործողական դասակարգի մնացորդների իսպառ բացակայության պայմաններում էլ, պետությունը դեռ պահպանվելու է։ Սակայն «պետությունը մահանում է, քանի որ այլևս դասակարգեր չկան, այդ պատճառով էլ որևէ դասակարգի ճնշել չի կարելի։ Բայց պետությունը դեռևս բոլորովին չի մահացել, որովհետև մնում է «բուրժուական իրավունքի» պաշտպանությունը, որը սրբագործում է փաստական անհավասարությունը։ Պետության լիակատար մահացման համար հարկավոր է լիակատար կոմունիզմ»[10],— գրել է Վ. Ի. Լենինը։ Այսպիսով, ըստ Վ. Ի. Լենինի, իսկական իմաստով պետության մահացման պրոցեսը մեր երկրում սկսվեց շահագործողական իրավակարգի ոչնչացման պահից և այդ պրոցեսը պետք է զարգանա և ապագայում։ Իսկ այդ պրոցեսն ընթացել է հետևյալ կերպ. «...Կապիտալիզմի ժամանակ մենք ունենք բառիս բուն իմաստով պետություն, մի հատուկ մեքենա, որով մի դասակարգ ճնշում է մյուսին, և այն էլ՝ փոքրամասնությունը ճնշում է մեծամասնությանը»[11]։ Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելիս (պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանում) ճնշման հատուկ մեքենան՝ պետությունը, դեռևս անհրաժեշտ է, բայց, ինչպես նշվեց վերը, դա արդեն անցման պետություն է, որովհետև նախկին շահագործվող մեծամասնությունը ճնշում է նախկին շահագործող փոքրամասնությանը։ Իսկ կոմունիստական հասարակարգի առաջին փուլի, այսինքն՝ սոցիալիզմի ժամանակ և դեպի կոմունիզմի անցման ճանապարհին, համաժողովրդական պետությունը պաշտպանում է արտադրության միջոցների ընդհանուր սեփականությունը և աշխատանքի ու պրոդուկտի բաշխման հավասարությունը։ Սոցիալիստական համաժողովրդական պետությունն անհրաժեշտ է ոչ թե ճնշում իրականացնելու, այլ նյութական բարիքների արտադրության կազմակերպման և բաշխման գործում պետական-իրավական միջամտություն իրականացնելու համար։ «Մեր օրենսդրությունը... պետք է ավելի, ակտիվորեն օգնի... աշխատանքի և սպառման չափի գործուն վերահսկողությանը, սոցիալիստական արտադրության սկզբունք-

5 «ՍՄԿԿ ծրագիրը (նոր խմբագրություն)», Երևան, 1986, էջ 14։
6 Նույն տեղում, էջ 61։
7 Նույն տեղում, էջ 63։
8 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 33, էջ 119։
9 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 33, էջ 121։
10 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 33, էջ 121։
11 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 33, էջ 125։

ների կենսագործմանը»[12],— ՍՄԿԿ XXVII համագումարում ասաց Մ. Ս. Գորբաչովը։ Այս խնդիրների ձևակերպումը հենվում է Վ. Ի. Լենինի գաղափարների վրա։ Այսպես, ըստ առաջնորդի, քանի որ պետությունը չունի ճնշման ֆունկցիա, ապա այդ կողմով նա մահանում է, բայց պետությունը մնում է մյուս կողմով, «մնում է իբրև հասարակության անդամների միջև պրոդուկտների բաշխման և աշխատանքի բաշխման կարգավորիչ (որոշող)»[13]։ Այնուհետև, պետությունը սոցիալիզմի բազմակողմանի և պլանաչափ կատարելագործման ու երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման ընթացքում պետք է կարգավորի ազգային եկամտի զարգացման և երկրի կարգապահության ամրապնդման բնագավառները, սահմանի ծախսման և կուտակման ֆոնդերը, կազմակերպի վերարտադրությունը՝ հասարակության անդամների պահանջները բավարարելու համար, լուծի պետական ապարատի պահպանության միջոցների հայթայթման հարցերը և այլն։ Պետությունն աստիճանաբար, բայց ավելի արագ, քան պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանում, հասարակությանը տանում է ֆիզիկական ու մտավոր աշխատանքի, քաղաքի և գյուղի միջև եղած էական տարբերությունների վերացման ճանապարհով, որովհետև այդ տարբերությունները «չի կարելի վերացնել միայն արտադրության միջոցները հասարակական սեփականություն դարձնելով...»[14]։ Դրա հետ միասին սոցիալիզմի ժամանակ ևս գոյություն ունի անհավասարություն մարդկանց միջև՝ նրանց ընդունակությունների և այլ հարցերում. «...Մեկն ավելի ուժեղ է, մյուսն՝ ավելի թույլ. մեկն ամուսնացած է, մյուսը՝ ոչ. մեկն ավելի շատ երեխա ունի, մյուսն ավելի քիչ և այլն»[15]։ Սոցիալիզմի պայմաններում նույն աշխատանքի համար մեկը շատ է ստանում, մյուսը՝ քիչ, մեկը նույն աշխատանքում ավելի շատ արդյունք է տալիս, քան մյուսը։ Եվ քանի որ սոցիալիստական հասարակարգում դեռևս չի ստեղծվում նյութական բարիքների առատություն, առանձին տարրեր ձգտում են ավելի շատ վերցնել, քան տալ հասարակությանը։ Սոցիալիստական սեփականության, անձի կյանքի, առողջության, ազատության և արժանապատվության, քաղաքացիների քաղաքական ու աշխատանքային իրավունքների, քաղաքացիների անձնական սեփականության դեմ ուղղված, ինչպես նաև տնտեսական, տրանսպորտային, պաշտոնական հանցագործությունները, արդարադատության, վարչակարգի, հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները կանխելու խնդիրների իրականացումը պահանջում է ակտիվացնել իրավապահական մարմինների գործունեությունը և բարձրացնել աշխատավորական կոլեկտիվների դերը հանցագործությունների դեմ մղվող պայքարում։ Այս պահանջը ՍՄԿԿ XXVII համագումարի որոշման մեջ ստացավ հետևյալ ձևակերպումը. «Համագումարը կարևորագույն նշանակություն է տալիս պետական և հասարակական կյանքի իրավական հիմքի մշտական ամրապնդմանը... Անհրաժեշտ է հաստատակամորեն բարձրացնել իրավապահական և այլ մյուս մարմինների կադրերի պատասխանատվությունը, որոնք կոչված են օրենքների գործնական կիրառման, իրավակարգի, սոցիալիստական սեփականության, սովետական քաղաքացիների օրինական շահերի պահպանության հետ...»[16]։

ՍՄԿԿ ծրագրի այն պահանջը, որը վերաբերում է բացասական երևույթների առաջացման պատճառների վերացմանը, կարևոր նշանակություն ունի, որովհետև հանցագործությունների առաջացման պատճառների վերացմամբ կվերանան հանցագործությունները։ «Համակեցության կանոնները խախտող

---

12 Մ. Ս. Գորբաչով, ՍՄԿԿ Կենտկոմի քաղաքական զեկուցումը ՍՄԿԿ XXVII համագումարում, Երևան, 1986, էջ 101—102։

13 Վ. Ի. Լենին, նույն, հ. 33, էջ 120։

14 Վ. Ի. Լենին, նույն, հ. 33, էջ 122։

15 Վ. Ի. Լենին, նույն, հ. 33, էջ 118։

16 «ՍՄԿԿ XXVII համագումարի բանաձևը ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քաղաքական զեկուցման առթիվ», Երևան, 1986, էջ 22։

էքսցեսների «պատճառների» վերացումով էքսցեսները անխուսափելիորեն կսկսեն «մահանալ»[17], -դրել է Վ. Ի. Լենինը։ Այս պահանջների հիման վրա ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրությունում ընդգծվել է, որ «կուսակցության մշտական հոգատարության առարկան են եղել և մնում են պետական ու հասարակական կյանքի իրավական հիմքի ամրապնդումը, սոցիալիստական օրինականության ու իրավակարգի անշեղ պահպանումը, արդարադատության մարմինների, դատախազական հսկողության, արդարադատության ու միլիցիայի աշխատանքի բարելավումը»[18]։

Սոցիալիզմի կատարելագործման երկարատև էտապում պետական-իրավական միջամտությունն անհրաժեշտ է նաև քաղաքացիների, քաղաքացիների և պետական հիմնարկ-ձեռնարկությունների ու հասարակական կազմակերպությունների միջև առաջացած հասարակական հարաբերությունների կարգավորման համար։ Հետևաբար, նշված խնդիրները սովետական պետությունը, քաղաքական ամբողջ սիստեմը կարող են կատարել միայն այդ սիստեմի հետագա զարգացման և կատարելագործման միջոցով։ ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրությունում ասված է. «ՍՄԿԿ-ն գտնում է, որ արդի էտապում հասարակության քաղաքական սիստեմի զարգացման ստրատեգիական գիծը սովետական դեմոկրատիայի կատարելագործումն է, ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարման ավելի ու ավելի լիակատար իրագործումը՝ պետական ու հասարակական կյանքի հարցերի լուծմանը աշխատավորների, նրանց կոլեկտիվների ու կազմակերպությունների ակտիվ և գործուն մասնակցության հիման վրա»[19]։ Ծրագրային այս պահանջները լիովին համապատասխանում են մեր երկրի ժողովուրդների շահերին, որովհետև կապիտալիզմից սոցիալիզմի անցման և սոցիալիզմի վերջնական կառուցման ընթացքում գնալով պետությունը մերձեցավ հասարակության հետ և լայն պայմաններ ստեղծեց ժողովրդի սոցիալիստական ինքնավարության զարգացման համար։ Սոցիալիստական քաղաքական սիստեմը զարգանում և ամրապնդվում է ժողովրդի հետ կապը կատարելագործելու ճանապարհով, իսկ դրա համար անհրաժեշտ է, ՍՄԿԿ XXVII համագումարում ասաց Մ. Ս. Գորբաչովը, ընդլայնել հրապարակայնությունը և օրենքների նախագծերի համաժողովրդական քննարկումը, խորացնել սովետական մարդու սոցիալ-քաղաքական և անձնական իրավունքներն ու ազատությունները և ամրապնդել դրանց երաշխիքը, բարձրացնել աշխատավորների, բոլոր քաղաքացիների ակտիվությունը իրավունքի և բարոյականության նորմերից թույլ տրվող շեղումների հաղթահարման, սոցիալիստական օրինականության ամրապնդման գործում։

Բացի ներքին ֆունկցիաներից, սովետական համաժողովրդական պետության հետագա ամրապնդումը տեղի է ունենում նաև երկրի պաշտպանության, համաշխարհային սոցիալիստական սիստեմի պետությունների հետ եղբայրական համագործակցության ու փոխադարձ օգնության, խաղաղության համար պայքարի և սոցիալ-տնտեսական տարբեր սիստեմների երկրների հետ խաղաղ գոյակցության, զարգացած երկրների հետ համագործակցության ու ազգային ազատագրական շարժմանը օգնելու արտաքին ֆունկցիաների իրականացման միջոցով։ Այս խնդիրների իրականացման կազմակերպման առաջատար ուժը հանդիսանում է կոմունիստական կուսակցությունը՝ սովետական հասարակարգի քաղաքական սիստեմի միջուկը, որը գոյություն ունի ժողովրդի համար և ծառայում է ժողովրդին։ ՍՄԿԿ-ի ղեկավարությամբ գործում են այդ սիստեմի բոլոր օղակները՝ սովետական պետությունը, արհեստակցական միությունները, կոմերիտմիությունը, կոոպերատիվ և հասարակական այլ կազմակերպությունները, որոնք արտացոլում են սովետական բոլոր ազգերի ու ազգությունների, ամբողջ աշխատավորության շահերի միասնությունը։ Գործելով ՍՍՀՄ սահմանադրության շրջանակներում, կուսակցությունն ուղղություն է տալիս

17 Վ. Ի. Լենին, երկ, հ. 33, էջ 116։

18 «ՍՄԿԿ ծրագիրը (նոր խմբագրություն)», էջ 66։

19 Նույն տեղում, էջ 62։

պետական և հասարակական կազմակերպությունների աշխատանքին, հոգ է տանում այն մասին, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը լրիվ ձևով իրականացնի իր ֆունկցիաները։ Միաժամանակ, «կատարելագործելով ղեկավարման ձևերն ու մեթոդները,- ՍՄԿԿ XXVII համագումարում նշեց Մ. Ս. Գորբաչովը,- կուսակցությունը վճռականորեն հանգես է գալիս կուսակցական կոմիտեների ֆունկցիաները պետական ու հասարակական մարմինների ֆունկցիաների հետ շփոթելու դեմ»[20]։

Սեղ մոտ կուսակցությանն են պատկանում նոր հասարակարգի կառուցման ստրատեգիայի և տակտիկայի մշակման, կադրային քաղաքականության իրականացման, աշխատավորության գաղափարական դաստիարակության աշխատանքները։ Կուսակցական բոլոր կոմիտեները գործում են որպես քաղաքական ղեկավար մարմիններ, որոնք սիստեմատիկաբար կատարելագործում են իրենց աշխատանքի ձևերն ու մեթոդները՝ ժողովրդի հանդեպ իրենց ծառայությունը բարձր մակարդակով իրականացնելու համար։ Կատարելով հասարակության մեջ իր ղեկավար դերը, կուսակցությունն իր գործունեությամբ հասարակական-քաղաքական ինքնակառավարման օրինակ է ծառայում։ «Ծավալելով ներկուսակցական դեմոկրատիան... ՍՄԿԿ-ն ճիշտ ուղղություն է տալիս ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարման խորացման, երկրի գործերին մասսաների, յուրաքանչյուր մարդու մասնակցության ընդլայնման պրոցեսին»[21]։ Հայտնի է, որ որպեսզի սովետները համապատասխանեն պետական իշխանության զարգացմանը, Վ. Ի. Լենինը պահանջում էր «հետզհետե ավելի մեծ թվով քաղաքացիների, իսկ հետո նաև անխտիր բոլոր քաղաքացիներին սիստեմատիկ կերպով ներգրավել պետության կառավարման գործում...»[22]։ Լենինյան այս առաջադրանքը մինչև վերջ կենսագործելու համար ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրությունում շեշտը դրվել է ժողովրդի ներկայացուցչության ձևերի և ընտրական սիստեմի դեմոկրատական սկզբունքների կատարելագործման վրա այն հաշվով, որպեսզի «պետության կառավարման դպրոց անցնեն նորանոր միլիոնավոր աշխատավորներ»[23]։ Ուրեմն, սոցիալիզմի կատարելագործման երկարատև ժամանակաշրջանում կուսակցությունը պետության զարգացումը և ամրապնդումը իրականացնելու է ժողովրդական մասսաների ստեղծագործության ու նախաձեռնության կատարելագործման, քաղաքական և հասարակական սիստեմի բոլոր ինստիտուտների ակտիվացման ու ժողովրդի ինքնակառավարման ընդլայնման ճանապարհով։ Կուսակցությունը, կենսագործելով ժողովրդի ինքնակառավարման լենինյան դրույթը, ցույց է տալիս, որ համաժողովրդական պետության ժամանակ իշխանությունը իրականացվում է ոչ միայն ելնելով ժողովրդի շահերից, այլև ժողովրդի միջոցով։ «Կուսակցությունը հոգում է այն մասին, որ հասարակության և պետության կառավարման մեջ հետևողականորեն կենսագործվեն ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարման սկզբունքները, այսինքն՝ կառավարումը ոչ միայն իրականացվի ի շահ աշխատավորների, այլև օրինաչափորեն, ավելի ու ավելի մեծ չափով դառնա հենց աշխատավորների անմիջական գործը, որոնք իրենց վրա չեն ընդունում Վ. Ի. Լենինի խոսքերով ասած՝ ոչ մի իշխանություն, բացի իրենց սեփական միավորման իշխանությունից»[24]։ Լենինյան այս և նման կանխատեսումները հաստատվեցին տվետական իշխանության զարգացման ամբողջ ընթացքում։ «ՍՄԿԿ-ն մշտապես հոգում է ժողովրդական դեպուտատների սովետների՝ ՍՍՀՄ քաղաքական հիմքի, ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարման գլխավոր օղակի գործունեության բարելավման մասին»[25], -ասված է ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրությունում։

---

20 Մ. Ս. Գորբաչով, ՍՄԿԿ կենտկոմի քաղաքական զեկուցումը ՍՄԿԿ XXVII համագումարում, էջ 137։

21 Նույն տեղում, էջ 91։

22 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 91։

23 «ՍՄԿԿ ծրագիրը (Նոր խմբագրություն)», էջ 63—64։

24 Նույն տեղում, էջ 62։

25 Նույն տեղում, էջ 63։

իշխանության տեղական և բարձրագույն մարմիններում յուրաքանչյուր ընտրության ժամանակ 2,3 միլիոն[26] բանվորներ, գյուղացիներ, ծառայողներ, կուսակցականներ, անկուսակցականներ, կանայք, կոմերիտականներ ընտրվում են որպես դեպուտատներ։ Միութենական և ինքնավար հանրապետությունների ու տեղական սովետների վերջին ընտրությունների ժամանակ 8,8 միլիոն մարդ ընտրված էին ընտրական տարբեր օղակների հանձնաժողովներում, 30 միլիոնից ավելի մարդ ակտիվորեն մասնակցում են սովետների աշխատանքներին[27]։ Վերջին 25 տարում ընտրությունների ժամանակ սովետների դեպուտատների կազմի սիստեմատիկ թարմացման հետևանքով մոտավորապես 15 միլիոն մարդ անցել են իշխանության կառավարման սովետների դպրոցը։ Եվ որպեսզի նորանոր միլիոնավոր մարդիկ անցնեն կառավարման այդ դպրոցը, սովետների աշխատանքը գնալով պետք է կատարելագործվի։ Այսպիսով, իրականացվել են իշխանությունը ժողովրդի համար՝ ժողովրդի միջոցով լենինյան կանխատեսումները։ Դրանք արտացոլվել են սովետների կողմից ղեկավարվող 2,5 միլիոնից ավելի աշխատավորական կոլեկտիվներում[28], որոնք ՍՍՀՄ սահմանադրության համապատասխան լայն լիազորություններ են իրականացնում երկրի քաղաքական, տնտեսական ու սոցիալական կյանքում։ Հասուն սոցիալիզմի պայմաններում կուսակցությունն ամեն կերպ նպաստելու է այն բանին, որ յուրաքանչյուր աշխատավորական կոլեկտիվ դառնա ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարման բջիջ և ուժեղացնի իր ազդեցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա[29], ասված է ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրությունում։

Ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարման համակարգի կարևորագույն օղակներից են հասարակական կազմակերպությունները։ Արհմիությունները, կոմերիտմիությունը, կոոպերատիվ և հասարակական մյուս կազմակերպություններն իրենց կանոնադրական խնդիրներին համապատասխան մասնակցում են պետական ու հասարակական գործերի կառավարմանը, քաղաքական, տնտեսական և սոցիալ-կուլտուրական հարցերի լուծմանը։ Սահմանադրական իրենց իրավունքներով հասարակական կազմակերպությունները գնալով ավելի ակտիվ մասնակցություն են ունենում պետական մարմինների ձևավորման և գործունեության մեջ։ Աշխատավորության ամենամասսայական կազմակերպություններից են արհմիությունները, որոնք միավորում են 130 միլիոն մարդ։ Սոցիալիզմի կատարելագործման փուլում արհմիություններն ավելի ակտիվ մասնակցություն պետք է ունենան ժողովրդի սոցիալիստական ինքնավարության զարգացման գործում։ Նրանք, համագործակցելով սովետների, աշխատավորական մյուս կազմակերպությունների հետ, պետք է բարձրացնեն իրենց գերը պետական, տնտեսական և կուլտուրական շինարարության արմատական հարցերը լուծելու գործում։ Լենինյան երիտասարդության հասարակական-քաղաքական բազմամիլիոնանոց կազմակերպությունը, հանդիսանալով կուսակցության օգնականն ու հուսալի ռեզերվը, մեծ դեր է խաղում աճող հերթափոխի դաստիարակության, պիոներական կազմակերպության աշխատանքի բարելավման, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման, պետության և հասարակության ղեկավարման խնդիրների պրակտիկ լուծման գործում։ Կուսակցությունը, ասաց Մ. Ս. Գորբաչովը ՍՄԿԿ XXVII համագումարում, հետագա քայլեր կձեռնարկի «ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարման համակարգում արհմիությունների և կոմերիտմիության, ստեղծագործական միությունների և կամավոր ընկերությունների դերը բարձրացնելու ուղղությամբ։ Մասնավորապես նախատեսվում է ընդլայնել այն հարցերի շրջանակը, որոնք պետական մարմինները կարող են լուծել միայն համապատասխան արհմիութենական, կոմերիտական, կանանց կազմակերպությունների մասնակցու-

26 «Аргументы и факты», 17. I. 1984.

27 «Սովետական Հայաստան», 2. III. 1985։

28 «Известия», 18. VI. 1983.

29 «ՍՄԿԿ ծրագիրը (նոր խմբագրություն)», էջ 59։

թյամբ... այդ կազմակերպություններին իրավունք տալ մի շարք դեպքերում կասեցնելու կառավարչական որոշումների իրագործումը»[30]։

Կուսակցությունը նպաստում է կոոպերացիայի՝ կոլտնտեսությունների, սպառողական, բնակշինարարական կոոպերատիվների և կոոպերատիվ կազմակերպությունների ու միավորումների գործունեության կատարելագործմանը, «դրանք դիտելով որպես սոցիալիստական ինքնակառավարման կարևոր ձև և ժողովրդական տնտեսության զարգացման արդյունավետ միջոց»[31]։

Ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարման սիստեմի մեջ որոշակի տեղ են գրավում ստեղծագործական միությունները, գիտական, տեխնիկական, կուլտուր-լուսավորական, սպորտային, պաշտպանական և կամավոր մյուս ընկերությունները, որոնց ակտիվացման համար կուսակցությունը ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ։

Սոցիալիզմի զարգացման նոր փուլում տեսականորեն և պրակտիկապես սկզբունքորեն նոր փոխհարաբերություն է առաջացել պետության ու ժողովրդի ինքնավարության միջև։ Սոցիալիզմի հաղթանակի պայմաններում ժողովրդի ինքնավարությունը ոչ միայն չի հակադրվում պետությանը, այլև ներդաշնակորեն համագործակցում է պետական ղեկավարման հետ։ Սոցիալիստական պետությունը կիրառում է ոչ միայն և ոչ այնքան հարկադրանքի, որքան համոզման միջոցներ։ Պետությունը կազմակերպում, դաստիարակում, վերադաստիարակում և խրախուսում է մարդկանց, ինչի համար որ կոչված են ժողովրդի ինքնավարությունները։ Հետևաբար, սոցիալիզմի պայմաններում պետությունը ամեն կերպ զարգացնում է ժողովրդի ինքնավարությունը։ Ուստի, սոցիալիզմի կատարելագործման փուլում չկա ոչ մի հիմք՝ հետաձգելու ժողովրդի ինքնավարության զարգացման պրոցեսը մինչև անպետականության ժամանակաշրջանը։ Սակայն ժողովրդի սոցիալիստական ինքնավարությունը չպետք է շփոթել ժողովրդի կոմունիստական ինքնավարության հետ, որովհետև առաջինը գործում և զարգանում է պետության հովանու տակ, իսկ վերջինս՝ պետությունն մահացման և հետագա ժամանակաշրջանում։ Բայց ժողովրդի կոմունիստական ինքնավարությունը չի կարող առաջանալ առանց սոցիալիստական ինքնավարության զարգացման, որովհետև վերջինս առաջինի անհրաժեշտ և անխուսափելի աստիճանն է պետության, դեմոկրատիայի, ընդհանրապես քաղաքական ինստիտուտի կարգի ժամանակ, որը գործում է ժողովրդի համար՝ ժողովրդի միջոցով։

Մեծ են սոցիալիստական պետության արտաքին ֆունկցիաները։ Քանի գոյություն կունենա կապիտալի աշխարհը, հետևաբար և պատերազմի վտանգը, ինչպես նաև իմպերիալիստական շրջանների հակասոցիալիստական քայքայիչ գործունեությունը, կոմունիզմ կառուցող ժողովուրդները հարկադրված են լուրջ ուշադրություն դարձնել սոցիալիստական սիստեմի պաշտպանության ամրապնդմանը։ Եթե կապիտալիստական պետությունները ներքին պայմանների տեսակետից իրենց գոյությունը չեն կարող պահել առանց բանակի, ապա մեր հասարակությունը այդ առումով բանակի կարիք չունի, սակայն քանի դեռ գոյություն ունի իմպերիալիզմը, կուսակցությունը և պետությունը չթուլացող ուշադրություն են նվիրում բանակին. «հաշվի առնելով բարդ միջազգային իրադրությունը, իմպերիալիստական ռեակցիոն շրջանների աճող ագրեսիվությունը, ՍՄԿԿ Կենտկոմը, Կենտկոմի քաղբյուրոն անդուլ ուշադրություն են նվիրում երկրի պաշտպանունակությանը...»[32]։ Իմպերիալիստական պետությունների կողմից իրականացվող սպառազինության մրցավազքը կոմունիստական հասարակարգ կառուցող երկրներին ստիպում է կատարել ռազմական ծախսեր, որի հետևանքով տուժում է նյութական բարիքների արտադրության գործը։ Այս

---

30 Մ. Ս. Գորբաչով, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քաղաքական զեկուցումը ՍՄԿԿ XXVII համագումարին, էջ 97—98։

31 «ՍՄԿԿ ծրագիրը (նոր խմբագրություն)», էջ 69։

32 Մ. Ս. Գորբաչով, ՍՄԿԿ Կենտկոմի քաղաքական զեկուցումը ՍՄԿԿ XXVII համագումարին, էջ 163։

պրոցեսը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ չեն ստեղծվել միջազգային համապատասխան պայմաններ։ «Սոցիալ-տնտեսական և գաղափարախոսական անհրաժեշտ նախադրյալների հասունացման, կառավարման մեջ բոլոր քաղաքացիների ներգրավման համեմատ. համապատասխան միջազգային պայմանների առկայության դեպքում սոցիալիստական պետությունը... ավելի ու ավելի մեծ չափով կդառնա անցողիկ ձև «պետությունից ոչ պետության»[33],— ասված է ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրությունում։

Այսպիսով, պետությունը սոցիալիզմի ներկա և ապագա ամբողջ ժամանակաշրջանում կհանդիսանա որպես նրա կատարելագործման գլխավոր գործիքը, որը երկրի կառավարման գործում մասսաների լայն մասնակցության ապահովման, հասարակական կազմակերպությունների հետ ավելի զարգացած փոխհարաբերությունների, անհատի հետ սերտ կապ ստեղծելու միջոցով մի նոր աստիճանի կբարձրացնի իշխանության իրականացումը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարումը զարգացնելու համար։

РАЗВИТИЕ ТЕОРИИ ОБЩЕНАРОДНОГО ГОСУДАРСТВА В МАТЕРИАЛАХ XXVII СЪЕЗДА КПСС

ОГАНЕС ОВСЕПЯН

Резюме

Поскольку государство в период совершенствования социализма «выступает главным орудием», КПСС ключевым вопросом считает «развитие и укрепление Советского Социалистического государства». В материалах XXVII съезда КПСС подчеркнуто, что дальнейшее укрепление Советского государства должно идти по пути полного развития его демократического, общественного характера, все более полного осуществления социалистического самоуправления народа на основе активного и действенного участия трудящихся, их коллективов и организаций в решении вопросов государственной и общественной жизни.

В новой редакции Программы КПСС отмечается, что ведущей силой этого процесса выступает партия—ядро политической системы советского общества.

В материалах XXVII съезда серьезное внимание уделено дальнейшему расширению и улучшению деятельности Советов народных депутатов—главного звена социалистического самоуправления народа, общественных организаций—важных звеньев системы социалистического самоуправления народа.

---

33 «ՍՄԿԿ ծրագիրը (նոր խմբագրություն)», էջ 31։